

Կ-075²-17.07.2017-ՏՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

« » « » 2017 թվականի N -Ն

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 23-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«23. լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանից այլ անձանց յուրաքանչյուր տեղեկատվության թղթային տարբերակով տրամադրման համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով»:

Հոդված 2. Օրենքի 20.1-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանից այլ անձանց յուրաքանչյուր տեղեկատվության թղթային տարբերակով տրամադրման համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Կ-075²-17.07.2017-ՏՀ-011/1 ՀՀ օրենքի նախագծում կատարված փոփոխությունների և լրացումների

*Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ*

Կ-075²-17.07.2017-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

« » » 2017 թվականի N -Ն

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 23-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«23. իրենց հիմքերի էլեկտրոնային գրանցամատյանից այլ անձանց յուրաքանչյուր տեղեկատվության **թղթային տարբերակով** տրամադրման համար՝ **բազային տուրքի եռապատիկի չափով**»:

~~— թղթային տարբերակով — բազային տուրքի եռապատիկի չափով~~

~~— էլեկտրոնային տարբերակով — բազային տուրքի չափով»~~

Հոդված 2. Օրենքի 20.1-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանից այլ անձանց յուրաքանչյուր տեղեկատվության **թղթային տարբերակով** տրամադրման համար՝ **թղթային տարբերակով**—բազային տուրքի եռապատիկի չափով ~~— էլեկտրոնային տարբերակով — բազային տուրքի չափով~~»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»>> ՀՀ ՕՐԵՆՔԻ (Կ-075²-17.07.2017-ՏՀ-011/1) ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության փոփոխության /լրացման/ հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկության վերաբերյալ հեղինակի /հիմնական գեկուցողի եզրակացությունը/	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ Ազգային ժողովի <<Ելք>> խմբակցություն	1-ին հոդվածի 1-ին մաս	Հանել <<էլեկտրոնային տարբերակով բազային տուրքի չափով>> բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Առաջարկն ընդունվել է:
ՀՀ Ազգային ժողովի <<Ելք>> խմբակցություն	2-րդ հոդվածի 1-ին մաս	Հանել <<էլեկտրոնային տարբերակով բազային տուրքի չափով>> բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Առաջարկն ընդունվել է: